



Թիւ 1 Ապրիլ-Մայիս 2011 /
 www.azadkhosk.com /
 Ելեկտրոնային Անկախ Պարբերաթերթ

Գլխավոր էջ |
[Համայնքային](#) |
[Խմբագրական](#) |
[Հարցազրույց](#) |
[Ցօղուածներ](#) |
[Գրական-Մշակութային](#) |
[Տեսակէտ](#) |
[Անցուղարձ](#)

Կարելոր ցայտարարութիւն

Հայկական տառատեսակներու պատճառով, վստահ եմ ձեզմէ ռմանք չկարողացան ընթերցել կայքէջի էջերը: Հետեւեալ լուծումը կ'առաջարկենք.- Իւրաքանչիւր էջին վրայ, դուք կը տեսնէք PDF-ի կապը, որուն վրայ սեղմելով պիտի կարողանաք ընթերցել տուեալ էջը միայն: Նոյնը ընել ամէն մէկ էջին համար: Շնորհակալութիւն:

If you can not read this page then click here to view the pdf version



Ինչո՞ւ «Ազատ Խօսք»ը

Չանգուածային տեղեկատուութեան մեր ժամանակներուն՝ մամուլը, ըլլայ անկա տպագիր, հեռուստատեսային թ է էլեկտրոնային տարբերակներով, կոչուած է հարազատ հայելին ըլլալու հասարակութեան քաղաքական, ընկերային, տնտեսական, մշակութային, բարոյա-հոգեբանական կեանքին: Բազկերակը՝ անոր իղծերուն ու յոյգերուն, տազնապներուն ու երազներուն, խտելներուն ու տեսլականին...: Մէկ խօսքով՝ անոր հաւաքական բազմերես կեանքին ճշմարիտ արտացոլումը: Նոյնն է պարագան հայ մամուլին, ի մասնաւորի յանձնառու մամուլին, որ բազում ու բազմատեսակ իրադարձութեանց լոյսին տակ, կը միտի կարելի անաչառութեամբ փնտռել ու գտնել իրադարձութեանց ճիշդ պատկերը, անոնց տուն տուող բուն դրդապատճառները եւ անոնց առնչութիւնը հայ կեանքը յուզող խնդիրներուն, հայ հաւաքական լինելութեան հիմնահարցերուն ի Յայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս...: Այս հասկացողութեամբ, ան կոչուած է եապտ ծառայելու հայ հանրութեան, զայն արթուն պահելով Նոյն հանրութեան ներկան ու ապագան պայմանաւորող գործընթացներուն, հայկական հիմնախնդիրներուն, ազգային-համամարդկային գաղափարականին ու արժեքային համակարգին՝ մեր խառնաշփոթ ժամանակներու թոհովփոհին մէջ մանաւանդ, ուր շատ անգամ այնքան դժուար է գատորոշել ճշմարիտը՝ սխալէն, իրաւը՝ սուտէն ու կեղծիքէն, կարելորը՝ անկարելորէն, հայօգուտը՝ հայավնասէն...: Նման խառնաշփոթին մէջ, ակնյայտ երեւոյթ է որ դեմոկրատիայէն եւ խօսքի ազատութենէն բարբառող շատ մը լրատուամիջոցներ, իրենց ապատեղեկատուութեամբ , կը նպատակադրեն մոլորեցնել հանրութիւնը ի սպաս իրենց անձնական, քլիքային, խմբակային ու հատուածական շահերուն...:

Անժխտելի ճշմարտութիւն է որ ազատ խօսքի իրաւունքը կը պատկանի բոլորին: Բայց այդ իրաւունքով խօսող թէ գրող հրապարակագիրը աջալուրջ պիտի ըլլայ խորագոյն պատասխանատուութեամբ ի գործ դնելու իր այդ իրաւունքը, որովհետեւ ան, եթէ տէրն է իր կոչումին, պարտի ճիշդ կողմորոշել հանրային կարծիքը, միշտ հիմնուելով առարկայական փաստերու եւ տուեալներու վրայ եւ՝ յստակ կեցուածք որդեգրել անոնց նկատմամբ, ելլելով միայն ու միայն հանրութեան գերագոյն շահերէն, հեռու մնալով յատկապէս կամակատարը դառնալէ այս կամ այն հատուածին թէ իսմբակցութեան: Միաժամանակ՝ զգուշանալով առողջ եւ կառուցողական քննադատութիւնը շփոթելէ ցեխարձակման ու խծբանքին հետ: Զանգի՝ խօսքը ազդեցիկ հզօր ուժ է, որ կրնայ մաքրել մթնոլորտը, կամ թունաւորել զայն: Յիշենք Գեորգ Էմինի խորիմաստ տողերը.- *«Գրիչդ գոյշ գործածիր երբ խառն է դարը, Նոյն արճիճից են ծուլում գնդակն ու տառը»:*

«Ազատ Խօսք»ի ծննդոցով, մենք կ'առաջադրենք այս բեմը դարձնել վերկուսակցական, համահայկական մտածողութեամբ ու տեսլականով շնչող բեմ, դուրս ելլելով ազատ միտքը կաշկանդող եւ բռնադատող նախապաշարումներէ եւ կարծրատիպերէ, հատուածամով նկատառումներէ եւ նկրտումներէ, տեղայնական գաւառամտութենէ...:

«Ազատ Խօսք»ը պիտի միտի պատշաճօրէն արձագանգել համայնքային հարցերուն, սակայն չկոգիանալ անոնցմով, այլեւ՝ լայնօրէն բացուիլ համափիւռքեան, հայրենական, համահայկական հիմնախնդիրներու քննարկումին ընդառաջ, հայեացքը յառած պահել եւ աննկուն պայքարիլ յանուն ամբողջական հայ ժողովուրդի եւ ամբողջական Յայոց աշխարհի տեսլականին, մեր Պահանջատիրական եւ ազգային-ազատագրական երթին, ազատ, արդար, ժողովրդավար ու հզօր երկրի կերտումին, Յայաստան-Սփիւռք իմաստուն, նպատակաւաջ եւ անկեղծ համագործակցութեան, տարանջատ, կոտորակուած ու մասնատուած հայ ժողովուրդի ուժերու մէկտեղումին, եւ վերջապէս՝ ջատագովը ըլլալ մեր դարաւոր ինքնութիւնը արտայայտող հայ մշակոյթին եւ հազարագանձ հայոց լեզուին, մանաւանդ անոր առաւել վտանգուած ճիւղին՝ արեւմտահայերէնին, որ տարագիր արեւմտահայութեան տոհմիկ լեզուն է:

Կայքէջը հնարաւորութիւն պիտի ընձեռէ վստահաբար հասնելու առաւելագոյն թիւով հայերու, իրազէկ դառնալու նաեւ անոնց արձագանգներուն, տեսակետներուն...: Մեր ջերմ համոզումն է, որ կարծիքներու առողջ բախումով միայն մենք կրնանք վերահասու դառնալ ճշմարտութեան, որուն մենաշնորհը ոչ ոքին է տրուած: Չուգահեռաբար՝ բոլորս միասին կրնանք գործօն դերակատարը դառնալ համահայկական մտածողութեան ու գաղափարախօսութեան մը ձեւաւորումին, որ այսօր «օդի, ջուրի, հացի նման» անհրաժեշտ է մեզի, կարենալ պայքարելու համաշխարհայնացման ամենակուլ հոսանքին դէմ եւ յանուն Յայ ժողովուրդի ու Յայոց աշխարհի կենսունակ պահպանման եւ բարգաւաճման:

Եւ, վերջապէս, «Ազատ Խօսք»ը պարտի մօտէն, բաց աչքերով ու սթափ հայեացքով հետեւիլ ազգային մեր բոլոր կառոյցներու, հայ կեանքէն ներս գործող պատասխանատու անձանց ու իշխանութեանց գործունեութեան: Զանգի՝ մամուլը նաեւ Չորրորդ Իշխանութիւն է, որուն վերահսկող ուժէն պարտի զգաստանալ իւրաքանչիւր հանրային գործիչ եւ հաշուետու զգալ ինքզինք իր մէն մի խօսքին ու արարքին համար: Նոյն այդ զգաստութեան անհրաժեշտութիւնը կը վերաբերի նաեւ մեզի՝ «Ազատ Խօսք»ին, որուն գիտակից պատասխանատուութեամբ կը սկսինք մեր երթը:

Երան Գուլումճեան



Թիւ 1 Ապրիլ-Մայիս 2011 / www.azadkhosk.com / Ելեկտրոնային Անկախ Պարբերաթերթ

[Գլխավոր էջ](#) | [Համայնքային](#) | [Խմբագրական](#) | [Հարցազրույց](#) | [Ցօղումներ](#) | [Գրական-Մշակութային](#) | [Տեսակետ](#) | [Անցուղարձ](#)

If you can not read this page then click [here](#) to view the pdf version

Նիւթեր

* [Պատիւ Արժանատրաց](#)

* [Եղեռնի 96 -րդ Տարելիցը Կիպրոսի մէջ](#)

Պատիւ Արժանատրաց



Կիպրահայ արժէքներու մեծարման նուիրուած իմաստալից եւ հոգեյոյգ Երեկոյ մը տեղի ունեցաւ՝ Ապրիլ 11, 2011-ին, երեկոյեան ժամը 8-ին, Առաջնորդարանի «Վահրամ Իւթիւճեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Գերապատիւ Տէր Վարուժան Արք. Զերկէեանի, նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանի եւ ի ներկայութեան հայ թէ օտար հոծ հանրութեան մը: Երեկոյն կազմակերպուած էր Կիպրոսի Զայ Անտարանական Եկեղեցիին կողմէ: Մեծարումը նուիրուած էր հանգուցեալ Մանուէլ Զատունիի՝ անոր «Պատմագիտական Ուսումնասիրութիւններ, Ակնարկներ, Յուշեր» գիրքի լոյս ընծայման առթիւ եւ կիպրահայ կրթական մշակ՝ Տիկ. Նուարդ Զատունի-Բանաեթթիտիսի:

Պէտ. Արտա Ծէպէճեան իր բովանդակալից խօսքերով անդրադարձաւ՝ պատմաբան, մտաւորական, ուսուցիչ եւ մեծ երախտաւոր՝ հոգեյոյս Մանուէլ Զատունիի անմեռ վաստակին, որ կ'ընդգրկէր ի մասնաւորի Լառնազայի Ամերիկեան Ակադեմիի մէջ իր ուսուցչական եւ գրադարանավարութեան քառասուն երկար տարիներու գործունէութիւնը (1922-1962), իր հրատարակչական աշխատանքը, հայ Բառ ու Բանի անխնշ սպասարկումը եւ իր պատմագիտական ուսումնասիրութիւնները: Նմանապէս, ան իր երախտիքի խօսքը յայտնեց կիպրահայ կրթական մշակ՝ Տիկ. Նուարդ Զատունի-Բանաեթթիտիսի, վեր առնելով յատկապէս անոր մէջ տիպաոր Դաստիարակը, որուն ծառայութիւնը, ըստ էութեան, շարունակութիւնն էր՝ որդւոց-որդի, իր հօր Մանուէլ Զատունիի թողած ժառանգութեան, եւ որուն ուշագրաւ ներգործութիւնը կը տարածուէր հայ եւ կիպրացի բազմաթիւ սերունդներու վրայ:



Պրն. Զրայր Ծէպէճեան ամփոփ գիծերով ներկայացուց Մանուէլ Զատունիի գիրքը՝ հրատարակուած Պէրուքի մէջ 2010-ին, խմբագրութեամբը յայտնի մտաւորական Երուանդ Զատունի: Գիրքը կը պարփակէ Մանուէլ Զատունիի պատմագիտական ուսումնասիրութիւնները, յօդուածներ, քարոզներ, յուշեր...:

Տեղի ունեցաւ գինեձօնի տպաւորիչ արարողութիւն ձեռամբ Վարուժան Արքեպիսկոպոսի, որմէ ետք ընտանիքի խօսքը ներկայներուն փոխանցեց՝ ԱՄՆ-էն յատկապէս Կիպրոս ժամանած Վեր. Պէտ. Վարդգէս Զատունի: Նմանապէս՝ Չոփեցերիայէն մասնատրապէս Կիպրոս ժամանած Պրն. Ֆիլիթ Բանաեթթիտիս:

Պէտ. Ներկ. Պրն. Վարդգէս Մահտեսեան՝ անդրադառնալով Տիկ. Նուարդ Բանաեթթիտիսի կրթական բազմամեայ ծառայութեան, Նշեց յատկապէս որ ինք եւս ներշնչուած էր անոր բարութենէն ու ազնուութենէն, եւ առ ի գնահատանք անոր վաստակին զայն պարգեւատրեց խորհրդանշական յուշատախտակով մը: Երեկոյն գեղարուեստականօրէն ճոխացուցին Ալիք եւ Վահի Ծէպէճեանները, առաջինը՝ սրինգի, երկրորդը՝ դաշնամուրի վրայ նուագելով երկու երաժշտական երկեր՝ Դենտլըն եւ Մենտլընընէ:



Զանդիսուքիւնը իր աւարտին հասաւ Վեր. Զատունիի Օրինութեան աղօթքով եւ Վարուժան Արքեպիսկոպոսի Պահպանիչով:

Երկու վաստակաշատ կեանքեր՝ արդարեւ, նուիրուած մարդկային, ազգային, հոգեբարոյական ու իմացական արժէքներու սերունդէ-սերունդ տարածումին: Կեանքեր՝ որոնք պատիւ կը բերեն կիպրահայութեան ի մասնաւորի եւ կը ոգեշնչեն զայն իրենց վսեմ օրինակով...:

#####

Եղեռնի 96 -րդ Տարելիցը Կիպրոսի մէջ



Այս տարի, Ապրիլ 24-ը զուգահիւյսեցաւ Ս. Չատկուայ Տօնին: Զրիստոսի՝ «Չարջարեալ խաչեալ, թաղեալ, երորոր աւուր յարուցեալ» հրաշափառ խորհուրդը այնքան իմաստալից կերպով կը ներդաշնակուէր Եղեռնահար հայ ժողովուրդի վերագարթօնքին հետ, որ ահա՝ Զայոց Ցեղապալանութենէն եւ Զայրենահանումէն 96 տարի ետք, կ'ապրի Զայաստանի Զանրապետութեան տարածքին մէջ, յԱրցախ եւ ի սփիւռս աշխարհի, եւ կը մնայ Պահանջատերը իր արդար Դատին:

Մեծ Եղեռնի 96-րդ ամեակի ժողովորային ոգեկոյումը Կիպրոսի մէջ տեղի ունեցաւ Երկուշաբթի, 25 Ապրիլ 2011-ին՝ քաղաքշաւով, Զոգեհանգստեան արարողութեամբ եւ Զսկումով: Քաղաքշաւը սկիզբ առաւ Արմենիայ պողոտայի Լիմասոլի մայրուղիէն՝ Կ. Ե. ժամը 7:30-ին եւ ընթացաւ մինչեւ Նահատակաց Ցուշարձան, հոծ բազմութեան մը ուղեկցութեամբ՝ մեծ ու պզտիկ, մանուկ ու տարեց, մէկ սիրտ եւ մէկ հոգի դարձած...: Ժամը շուրջ 8:00-ին, ժողովուրդը արդէ մէկ տեղուած էր Ցուշակոթողին առջեւ, ուր տեղի ունեցաւ Զոգեհանգստեան Արարողութիւն ի յիշատակ մեր մէկ ու կեն միլիոն Նահատակներուն, որոնք ինկան Տէր Չօրի եւ Սուրիոյ անապատներու շէկ աւազներուն վրայ՝ անթաղ ու անշիրիւ...: Երգչախումբը կատարեց «Զայր Մեր»ի, «Իվերիին Երուսաղէմ»ի եւ այլ աղօթքներու երգեցողութիւնը ոգեշունչ մթնոլորտի մը մէջ:



Խօսք առաւ, այլուհետեւ, Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեան, Նշելով որ Ապրիլ 24-ը սուգի եւ ցափ օր է, այլեւ պայքարի ու պահանջատիրութեան: Ան շեշտեց, որ հայութիւնը՝ Ցեղապալանութենէն, հայրենահանումէն եւ հայ մշակոյթի անդրոմանելի կորուստներէն ետք՝ կրցաւ վերականգնիլ Սփիւռքի տարածքին, Զայաստան ի եւ Արցախի մէջ, եւ յառաջ տանիլ Զայոց Ցեղապալանութեան միջազգային ճանաչման գործընթացը: Ան աւելցուց որ այժմ շատ մը թուրք մտաւորականներ, ինչպէս Օրիան Բանուրք եւ այլք, կը ճանկան Զայոց Ցեղապալանութիւնը եւ քաջարիք կը դատապարտեն զայն գործադրողները, ենթարկուելով թրջական պետութեան հետապնդումներուն: Անդրադառնալով Զայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման խնդրին, յարգելի բանախօսը յայտնեց որ ատիկա չի կրնար կայանալ ի գին Զայոց Ցեղապալանութեան ճանաչման գործընթացին, կամ Արցախեան յաղթանակի ամրապնդման: Ան կոչ քրաւ համախմբուիլ մեր եկեղեցւոյ եւ հայկական կազմակերպութիւններուն շուրջ եւ միասնաբար շարունակել Պայքարը՝ հաւատքով եւ վճռակամութեամբ, քանզի անպայման՝ «Սրբազան Լեւո, մենք կը հասնինք, մենք կը հասնինք կատարիդ»...:



Ապա խօսք առաւ Թեմիս Կաթ. Օրիս. Տէր Վարուժան Արք. Զերկէեան, որ յայտնեց թէ Ապրիլ 24-ը յարութեան եւ վերագարթօնքի Օր է համայն հայութեան համար: Արդարեւ, Զրիստոսի օրինակով, Զեղապալանակուտ, հայրենահանումէն եւ հայ մշակոյթի անդրոմանելի կորուստներէն ետք՝ կրցաւ վերականգնիլ Սփիւռքի տարածքին, Զայաստան ի եւ Արցախի մէջ, եւ յառաջ տանիլ Զայոց Ցեղապալանութեան միջազգային ճանաչման գործընթացը: Ան աւելցուց որ այժմ շատ մը թուրք մտաւորականներ, ինչպէս Օրիան Բանուրք եւ այլք, կը ճանկան Զայոց Ցեղապալանութիւնը եւ քաջարիք կը դատապարտեն զայն գործադրողները, ենթարկուելով թրջական պետութեան հետապնդումներուն: Անդրադառնալով Զայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման խնդրին, յարգելի բանախօսը յայտնեց որ ատիկա չի կրնար կայանալ ի գին Զայոց Ցեղապալանութեան ճանաչման գործընթացին, կամ Արցախեան յաղթանակի ամրապնդման: Ան կոչ քրաւ համախմբուիլ մեր եկեղեցւոյ եւ հայկական կազմակերպութիւններուն շուրջ եւ միասնաբար շարունակել Պայքարը՝ հաւատքով եւ վճռակամութեամբ, քանզի անպայման՝ «Սրբազան Լեւո, մենք կը հասնինք, մենք կը հասնինք կատարիդ»...:

Զոսկ, Երգչախումբը ապրումով կատարեց ազգային-հայրենասիրական երգեր, ինչպէս՝ «Իմ Զայրենի Վառը», «Արաւելի Ողբ», «Ցանկած Տեսնել Չիմ Կիլիկիան», «Ո՛վ Զայոց Աշխարհը» ..., յաւելեալ իմաստ տալով օրուան խորհուրդին:

Այլուհետեւ, ծաղկեպսակներ գետեղեցին Ցուշակոթողին առջեւ՝ Պէտ. Ներկ. Վարդգէս Մահտեսեան, Թեմական Մարմնի Աստեապետ Սեպուհ Դաւիթեան, Խորհրդարանի Նախագահ Սարիսո Կարոյեանի փոխարէն եւ յոյն կուսակցապետը՝ Ներկաները եւ՝ մէկ առ մէկ, խոնարհումով մօտեցաւ Ցուշարձանին եւ կարմիր մեկտեղեցիին այնտեղ, որպէս խունկ ու աղօթք մեր բիրտաւ որ անշիրիմ նահատակներու անմեռ յիշատակին...:



Թիւ 1 Ապրիլ-Մայիս 2011 /
 www.azadkhosk.com /
 Ելեկտրոնային Անկախ Պարբերաթերթ

[Գլխավոր էջ](#) |
 [Համայնքային](#) |
 [Խմբագրական](#) |
 [Հարցազրույց](#) |
 [Ցօղուածներ](#) |
 [Գրական-Մշակութային](#) |
 [Տեսակէտ](#) |
 [Անցուդարձ](#)

If you can not read this page then click here to view the pdf version

Ունի՞նք Հայ Դատ Հետապնդելու Հաւաքական Կամքը

Եղեռնայուշ Ապրիլ եր դարձեալ: Ազգովին՝ մէկ սիրտ, մէկ հոգի, խոնարհեցանք անգամ մը եւս մեր բիրաւոր նահատակներու անմոռաց յիշատակին առջեւ եւ վերանորոգեցինք մեր ուխտն ու յանձնառութիւնը՝ հաւատարիմ մնալու անոնց նուիրական կտակին եւ նորոգ թափով հետապնդելու Հայ Դատի պահանջատիրութիւնը:

Հայ Դատի Պահանջատիրութիւն: Չարաչար հողովուած ու հողովուող (յաճախ կուսակցական նկատառումներով շահագործուող նաեւ) այս բառակապակցութիւնը հասկցա՞ծ ենք արդեօք մինչեւ վերջ իր ամբողջական իմաստով: Ի՞նչ կը նշանակէ անիկա, ըստ էութեան եւ խորքային առումով: Արդեօ՞ք՝ միայն Հայոց Տեղասպանութեան ճանաչու՞մ եւ...վե՞րջ: Արդարեւ, հայ քաղաքական միտքը՝ տասնամեակներէ ի վեր, ամբողջովին մտասուեռռուած է Տեղասպանութեան միջազգային ճանաչումը ապահովելու գործընթացին, եւ իր ողջ ներուժը կը մսխէ անոր ոլորապտոյտին մէջ: Այդ կը վկայեն հայ մամուլի էջերը եւ հրապարակային պաշտօնական բեմերը՝ Հայաստանի մէջ թէ Սփիւռքի: Կարծեք Հայոց Տեղասպանութեան ճանաչումով պիտի լուծուի Հայ Դատի մեր պահանջատիրութիւնը, եւ անխռով պիտի ապրինք այնուհետեւ: Կը հարցադրե՞նք երբեւէ թէ, վերջ ի վերջոյ, ինչո՞ւ գործադրուեցաւ Տեղասպանութիւնը: Ինչո՞ւ բռնահանուեցաւ հայ ժողովուրդը իր պապենական բազմահազարամեայ բնօրրանէն՝ Արեւմտահայաստանէ: Պատասխանը՝ յստակ ու մեկին է: Պարպելու համար Արեւմտահայաստանը իր բնիկ ժողովուրդէն՝ Արեւմտահայութենէն եւ ճամբայ հարթելու փանթուրանական ծրագրի իրականացման: Հետեւաբար, Հայ Դատի Պահանջատիրութեան հիմնաքարը՝ հայրենահանուած, տարագիր հայութեան իր հողէն բռնի ուժով արմատախիլ եղած ըլլալու փաստն է: «*Ժողովուրդը իր արմատէն կտրեցիք, իր չորս հազարամեայ հողէն կտրեցիք, իր մշակոյթէն կտրեցիք: Եթէ նոյնիսկ ոսկեայ օղանաւերով տեղահանած ըլլայիք՝ միեւնոյն է, ատիկա ցեղասպանութիւն է, բռնի տեղահանութիւն է՝ իր հողերէն եւ օճախներէն*», պիտի բարձրագոյ յայտարարէր մեծ մարտիկ մտաւորականը՝ Հրանդ Տինք Թուրքիոյ խորհրդարանին մէջ, քաջաբար բարձրածայնելով Տեղասպանութեան բուն էութիւնն ու նպատակը:

Հայ Դատի Պահանջատիրութիւնը՝ խորքին մէջ, Հայոց Տեղասպանութեան ճանաչումէն անդին, արդարութեան վերականգնումի, նիւթական եւ ի մասնաւորի հողային հատուցման քաղաքական նպատակ հետապնդել է: «Հայ Դատ» հասկացութիւնը ինքնին կ'ենթադրէ իրաւունք մը հետապնդել՝ այս պարագային, իրաւագրկուած արեւմտահայութեան ժառանգորդներու Դատը, արդարութիւնը վերականգնելու վերջնական նպատակով: Մինչդեռ՝ Հայ Դատի վերածումը սոսկ Տեղասպանութեան ճանաչումին, հաւասարազօր պիտի ըլլար բաւականանալ համընդհանուր, միջազգային (նոյնիսկ թուրք պետութեան թէ ժողովուրդին) բարոյական ցաւակցութեամբ:

Մենք մեզի հարց տալու ենք, սակայն, թէ ունի՞նք հաւաքական կամքը յառաջ տանելու այս դժուարին, բազում գոհողութիւններ պահանջող, բարդ աշխատանքն ու պայքարը, թե՛ գիտակցաբար կամ անգիտակցաբար հրաժարած ենք մեր Իրաւունքներու վերականգնումի քաղաքական նպատակէն: Համակերպա՞ծ ենք, արդեօք, ազգովին՝ լոկ Հայոց Տեղասպանութեան ճանաչում ձեռքբերելու բարոյական նպատակին...: Մոռցա՞ծ ենք բռնագրաւուած Արեւմտահայաստանը, մեր Տարագիր հայու ինքնութիւնը, գիտակցութիւնին ու յանձնառութիւնը: Ունի՞նք հաւաքական Պայքարի կամքը վերատիրանալ ու մեզ մէ բռնախլուած Արեւմտահայաստանին, եւ այդ ուղղութեամբ վերակազմակերպուելու քաղաքականօրէն: Իսկ քաղաքական վերակազմակերպումը անհրաժեշտ նախաքայլ է, միաւորելու համար բաժան-բաժան եղած, մասնատուած ու կոտորակուած սփիւռքի բեկորները եւ մէկ հաւաքական ու իրաւական ձայնով ներկայանալու աշխարհին:

Շատեր հաւանաբար մտածեն որ Հայ Դատի պահանջատիրութիւնը եապէս Հայաստանի Հանրապետութեան պարտականութիւնն է, որպէս ազգային անկախ պետականութիւն: Մեր զգաստ ու զգօն գիտակցութիւնը, սակայն, պիտի յուշէ որ վերանկախացած Հայաստանի Հանրապետութեան պետական օրակարգէն առ այսօր կ'ը բացակայի Հայ Դատի պահանջատիրութեան բուն հիմնախնդիրը: Այդ կը վկայեն տխրահռչակ Հայաստան-Թուրքիա փրոթոքոլի արձանագրութիւնները, ճանապարհային քարտեզը, եւ նմանատիպ այլ քայլեր՝ որոնք ցոյց կու տան որ Հայաստանի Հանրապետութեան պետական գործնապաշտ շահերը չեն ընդգրկեր ամբողջական Հայաստանի ու համայն հայութեան շահերն ու տեսլականը:

Այսօր, հետեւաբար, առաւել քան հրամայական, անյետաձգելի գերխնդիր է Տարագիր հայութեան քաղաքական վերակազմակերպումն ու խտացումը՝ համասփիւռքեան համաժողովէ մը բխած՝ Մէկ, Կեդրոնական, Լիազօր, Ներկայացուցչական Մարմնի մը ներքոյ, պատրաստուել ու համար Արդարութեան վերականգնումի եւ Հատուցումի բուն վերջնական նպատակին: Սա պիտի նաեւ նոր որակ ու մակարդակ փոխանցեր՝ հայրենահանուած, տարագիր հայութեան մեր ինքնութեան ու գիտակցութեան, իրաւատերի ու պահանջատերի մեր յանձնառութեան: Նմանապէս՝ նոր խթան պիտի հանդիսանար, վստահաբար, արեւմտահայ Բառ ու Բանի, մշակոյթի եւ, ընդհանրապէս, հայապահպանման մեր ճիգերուն՝ տարագիր հայեր ու սերունդներուն մօտ: Վերջապէս՝ անփոփարիկելի հնարաւորութիւնը պիտի ընձեռէր, համազգային համախոհութեամբ, յստակօրէն բնորոշելու մեր գերագոյն շահերը եւ ծրագիրներ մշակելու մեր հիմնահարցերու լուծման ուղղութեամբ, ինչպէս նաեւ ձեւակերպել ու մեր պահանջներ ու «առաւելագոյն»ն ու նուազագոյն»ը: Եւ, ամենակարեւորը՝ տարագիր հայերը պիտի կարենար օժտել կազմակերպուած կառոյցով մը, միջազգային ճանաչում ու կարգավիճակ ձեռքբերելու հեռանկարով:

Հաւաքական Կազմակերպուած Ուժ դառնալու պարագային միայն՝ Տարագիր հայու բեկորները կրնան յոյսը փայփայել արդիւնաւորութեամբ պայքարելու ծովման եւ ապազգայնացման զահավէժ ընթացքին դէմ եւ իրականացնելու մեր Մեծ եւ սրբազնագոյն Երազը՝ Ազգահաւաքի եւ Հողահաւաքի:

Հայոց Տեղասպանութեան հարիւրամեակին դէմ յանդիման, պիտի ունենա՞նք Հաւաքական Կամքը՝ Սարդարապատեան օրերուն նման, միասնական, համախմբուած ուժերով դիմագրաւել ու այս ճակատագրական Մարտահրաւերը:

Երան Գույումճեան




Թիւ 1 Ապրիլ-Մայիս 2011 / www.azadkhosk.com / Ելեկտրոնային Անկախ Պարբերաթերթ

[Գլխավոր էջ](#) | [Համայնքային](#) | [Խմբագրական](#) | [Հարցազրույց](#) | [Յօդուածներ](#) | [Գրական-Մշակութային](#) | [Տեսակէտ](#) | [Անցուդարձ](#)

If you can not read this page then click [here](#) to view the pdf version

Հարցազրույց Հայկական Ժողովրդային Շարժման Կեդրոնական Խորհուրդի Անդամ, «Արաքս» Շաբաթաթերթի Գլխավոր Խմբագիր՝ Մովսէս Քէշիշեանի հետ



Ստորեւ կը ներկայացնենք հարցազրույցը ամբողջութեամբ , նկատի ունենալով անոր ճիշդ ախտանշումները ինչ կը վերաբերի ի մասնաւորի Հայաստանի Հանրապետութեան ներքին հիմնախնդիրներուն եւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն։

-Այնքերեւ է, որ ատրպէճանական նաւթը կը կատարէ իր գործը։ Ատրպէճանը կը սպառազինուի, կը սպառնայ եւ նոր բարեկամներ կը շահի, իսկ մե՞նք...:

-Նաւթարդիւնաբերող երկիրներէն չկայ օրինակ, որ նաւթ կամ այլ հումք վաճառելով եւ ատոր հաշւոյն գինուելով՝ գերուծի վերածուած ըլլայ։ Զկայ նոյնիսկ, նաւթարդիւնաբերող պետութիւն, որ տնտեսական եւ ընկերային առումով լուրջ զարգացում ապրած ըլլայ։ Նման երկիրներու մէջ, մեծամասամբ, բռնապետական պետութիւններ կը ձեւաւորուին, որովհետեւ ատոր համար՝ ունին բաւարար ռեսուրս եւ հովանաւորներ, ինչ որ բացառուած է ԶՀ-ի պարագային։ Ուստի հակառակ ներկայ ֆինանսական առաւելութիւններուն, Ատրպէճանին կը սպասեն՝ սղաճ, օտարերկրեայ պետութիւններէ կախեալութիւն, առաւել կոռուպցիա եւ հետեւաբար տագնապ եւ ոստիկանական իշխանութեան դրոյթ։ Ու թէեւ Ատրպէճանը, հաւանաբար, մեր նկատմամբ մարտավարական յաջողութիւններ արձանագրէ, սակայն ռազմավարականօրէն ծախողելու է, ի հարկէ պայմանով որ մենք նորմալ պետութեան վերածուինք։ Իսկ մեր լուպիստական անյաջողութիւններու առիծի բաժինը կը վերադառնայ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու դատարկութեանը, առաւել՝ չաշխատելու, անհետեւողականութեան եւ անկազմակերպութեան։ Յաւօք, դիւանագիտութեան ոլորտէն ներս, յաճախ տպաւորութիւն ստեղծելը իրականութենէն աւելի կարելոր է։

-Ի՞նչ վիճակի մէջ են Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները. նկատեցիք, որ Մարտ 1-ի ողբերգական դէպքերու տարելիցին՝ 33 գրեթէ բոլոր թերթերը հանգամանօրէն զբաղուեցան այդ հարցով, մինչ Սփիւռքի մէջ, երեւի թէ միայն մէկ կազմակերպութիւն եւ թերթ անդրադարձան այդ հարցին, իսկ Հրանդ Տինքի սպանութեան տարելիցին, մինչ սփիւռքահայ բազմաթիւ թերթեր, առաւել թրջական յառաջդիմական մտաւորականութիւնն ու լրատուութիւնը խօսեցան այդ մասին, հայաստանեան միայն մէկ թերթ յիշեց այդ թուականը։ Ի՞նչպէս հասկնալ այս հակասական երկուութիւնը։

-Հաղորդակցութեան յեղափոխութեան ժամանակաշրջանին, Հայաստան ը եւ Սփիւռքը կ'ապրին տարբեր անջրպետներու մէջ։ 33 պատասխանատուներու այցելութիւնները Սփիւռքի հայկական համայնքները, մեծաւ մասամբ, ցուցադրական, ուստի եւ ապարդիւն են։

Սփիւռքահայ թերթերու մեծամասնութիւնը կուսակցական օրկաններ են, հետեւաբար անոնք չեն հանդիսանար սփիւռքահայութեան հայելին։ Այդ օրկանները 33 իրադարձութիւններուն կը նային իւրովի ըմբռնումներով եւ նկատառումներով, անոնք նոյնպէս ունակ են իրենց համայնքի ցանկացած իրադարձութիւնը անտեսել կամ չտեսնել ձեւանալ։ Աւանդաբար, անոնք աւելի ունակ են անդրադառնալու իրենց կազմակերպած բովանդակագուրկ ճաշկերոյթներուն, քան Հայութեան առնչուող լուրջ հարցերուն։ Իսկ միւս կողմէ, Հայաստանի մէջ, քաղաքացիական տարրական իրաւունքներու ոտնահարման պայմաններու մէջ, յաճախ ռազմավարական եւ կենսական հարցերը կարող են յետին փլան մղուիլ։ Հայաստանի մէջ, ազգային հարցերու լուծումը, հասկնալիօրէն, կը պայմանաւորուին քաղաքացիներու իրաւունքներու յարգանքի եւ երկրին մէջ ընտրեալ, ժողովրդավար եւ օրինապահ պետութեան կայացմամբ։ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները տեղքայի մէջ են։

-Ո՞րն է, ըստ ձեզի, 33 նորմալ եւ զարգացող պետութիւն դառնալու գերխնդրին հիմնական խոչընդոտը։ Ո՞րտեղէն սկսիլ՝ Հայաստանի մէջ հարիւրաւոր տնտեսական եւ հասարակական հին ու նոր խորքային խնդիրներ կան։

-Հայաստանի մէջ շարունակուող լուրջ օրինախախտումներու գերակշռող մասը, ոչ թէ՝ նպատակ, այլ ընդամենը միջոց են։ Խոշոր օրինախախտումները տնտեսական մենաշնորհեալ բուրգերու անօրէն շահ ը ապահովելու համար կ'իրականացուին։ Այնքան ժամանակ որ 33 -էն ներս կը տիրեն մենաշնորհեալները, որոնք կը թալանեն պետութիւնը, ժողովուրդը, գործարարներն ու երկրի բնական հարստութիւնը, Հայաստանը չի կրնար նորմալ պետութիւն դառնալ, անկումն ու օրինախախտումը շարունակուելու են համատարած կերպով, անկախ այն հանգամանքէն, թէ որ կուսակցութիւնն է իշխողը, կամ ով է երկրի առաջնորդը։ Երբեմն կը լսենք, որ այս ուղղութեամբ քայլեր չնախաձեռնելը կը պայմանաւորուի երկրէն ներս տագնապ յառաջացնելու մտահոգութեամբ, մինչդեռ, այս դրութեան շարունակութիւնը, ոչ միայն տագնապալից, այլեւ խորտակիչ ու պայթիւնավտանգ է։ Ուստի մինչեւ այս հարցի նկատմամբ քաղաքական կամք չդրսեւորուի, ընտրակեղծիքները, դատական համակարգի փտածութիւնը, ստուերային տնտեսութիւնն ու կոռուպցիան, աղքատութիւնն ու սղաճը, լրատուական մենաշնորհումը, պետապաշտօնեաներու յամառութիւնն ու պաշտօններու առջ ու վաճառքը..., շարունակուելու են։ Աշխարհի մէջ չկայ երկիր, ուր տնտեսութեան հիմնական ռեսուրսները մենաշնորհուած ըլլան, բայց ինստիտուտները նորմալ աշխատին։ Տնտեսութիւնը կապանքներու մէջ չի կրնար զարգանալ, իսկ տնտեսական աճի մասին խօսիլը նման պայմաններու տակ, մեղմ ըսուած, անմտութիւն է։ Կիրակին Շաբաթէն աւելի շուտ չի կրնար գալ։

Մէկ կողմէ, Հայաստանը կը ցանկայ Եւրոպայի մօտենալ, իսկ միւս կողմէ՝ կը պայքարի Եւրոպական հասարակական կեանքի նուաճումներուն դէմ։

-Իսկ ձեր գնահատմամբ, իշխանութիւնը ի գորո՞ւ է ատիկա ընելու։

-Հայաստանի մէջ, տնտեսական ոլորտի առկայ վիճակը պայմանաւորուած է քաղաքական իրավիճակով։ Ցանկացած իշխանութիւն, եթէ կամենայ, կարող է օրինականութիւն հաստատել երկրին մէջ։

-33 ընդդիմութեան առաջնորդները կը խոստանան փոփոխութիւն։ Դուք Հայաստանի ներկայ ընդդիմութիւնը այլընտրանք կը համարե՞ք։

-Այլընտրանքը՝ նախ եւ առաջ նպատակային պետք է ըլլայ եւ այնուհետ է, որ նշանակութիւն կը ստանան նպատակը իրականացնող մարդիկ՝ լիտըրները։ Առաջնորդները՝ իրենք իրենց, այլընտրանք չեն կրնար համարուիլ, եթէ ծրագրային առումով համապատասխան առաջադրանքներ չներկայացնեն։ Ընդդիմութիւնը 33-ի մէջ, ի հարկէ, բազմաշերտ է, սակայն Հայաստանի մէջ յաճախ կը քննադատեն գործիչները եւ նուա՛գ՝ երեւոյթները։ Իսկ, չմոռնանք, որ ներկայ իրավիճակը չէ ստեղծուած վերջին տարիներուն, ատոնք արմատ նետած են առնուազն 15 տարի առաջուցնէ սկսեալ։ Այնպէս որ ներկայ կացութեան համար, նոյնքան ու դեռեւս աւելի պատասխանատու են 33 առաջին եւ երկրորդ նախագահները։

-33 երրորդ հանրապետութեան երեք նախագահները իրարու հետ համեմատելով, Ինչպե՞ս պիտի գնահատէիք անոնց գործունեութիւնը։

-Արտերկրէն նման դատողութիւններ ընելը ճիշդ չեմ համարեր։ Ձեր հարցումը անպատասխան թողնելու համար, կրնամ ըսել միայն՝ Տեր-Պետրոսեանի չափէն աւելի ենթարկուող, Քոչարեանի չափէն աւելի կոպիտ եւ Սարգսեանի չափէն աւելի անորոշ գործելաոճերը իրենք գիրենք արդարացուցած չեն։

-Ըստ ձեզի, Ի՞նչ դեր ունին արտաքին ուժերը 33 ներքին խնդիրներուն մէջ եւ հասարակական գորաշարժի գործին. իսկ իշխանութիւն-ընդդիմութիւն համախոհութիւնը կրնա՞յ նուազեցնել օտարերկրեայ միջամտութիւնը։

-Իշխանութիւն-ընդդիմութիւն յարաբերութիւններու քննքնէթ պատկերացում չունինք։ Սակայն, երկիրը լուրջ հարցերու դէմ յանդիման է կանգնած։ Հայաստանը կորսնցուցած է իր բնակչութեան առնուազն մէկ երրորդը։ Ցանկացած փորձ, ըլլայ ատիկա երկխօսութեան ձեւով կամ հասարակական ուժի գորաշարժով, որ կարող է արգելակել արտագաղթը եւ քաղաքացիին վստահութիւնն ներշնչել իր վաղուան նկատմամբ, օժանդակելու է 33 պետականութեան ամրապնդմանը, այլապէս՝ դեռ աւելի աճելու է արտաքին ուժերու ազդեցութիւնը երկրին մէջ։ Անոնք օգտուելու են նաեւ Հայաստանէն ներս տիրող առճակատումներէն եւ լարուածութենէն։

-24 Ապրիլի առիթով, ի՞նչ պատգամ պիտի ուղղէիք հայ ժողովուրդին։

-Պատգամ սայն է, որ Թուրքիոյ նկատմամբ մեր իրաւունքներու հարցը չհաւասարեցնել ցեղասպանութեան ճանաչման բարոյախօսութեան հետ։ 1965-ին, Խորհրդային սահմանափակումներու տարիներուն, կէս միլիոն հայութիւն Երեւանի մէջ բացագանչեց՝ «Մեր հողերը», այսօր, անկախացած Հայաստանի օրերուն, ջըսենք միայն՝ «մեր գոհերը» եւ անտեսնք անոնց երազանքը։

«Հայաստան» լրատու, Աթէք, 21 Ապրիլ 2011

(արեւմտահայերէնի վերածուած)



Թիւ 1 Մարիլ-Մայիս 2011 / [www.azadkhosk.com](#) /
 Ելեկտրոնային Անկախ Պարբերաբերք

[Գլխավոր էջ](#) |
[Համայնքային](#) |
[Նախագրական](#) |
[Հարցազրույց](#) |
[Յօդուածներ](#) |
[Գրական-Մշակութային](#) |
[Տեսակետ](#) |
[Անցուդարձ](#)

If you can not read this page then [click here to view the pdf version](#)

Լիւթեր

* [Ինչո՞ւ կը հանդուրժենք արձանագրութիւնները](#)

* [Ռուսական Թակարդ-Հայերը Կ'երթան Դէպի «Փայլուն Ապագայ»](#)


* [Յեղասպանութեան կենդանի վկաներ](#)

* [Հայաստան բերուելէն 42 տարի ետք ալ՝ Պետրոս Դուրեանի Գանկը Կը Մնայ Անթաղ](#)

Ինչո՞ւ կը հանդուրժենք արձանագրութիւնները

Թաթուլ Յակոբեան

Սիկիլիոսաի փորձագետ



Եթէ սկզբնական շրջանին, յատկապէս մինչեւ 2009-ի Ապրիլի 24-ի նախօրէին, Անգարան հայ-թրքական երկխոսութիւնը կը շահարկէր Հայոց ցեղասպանութեան ճանաչումը խոշոր երկիրներու մէջ չգտնացնելու նկատակով, ապա այսօր, ինչպէս մէկ անգամ էս ցոյց տուին օրերս Եւսիս-Կ-էն ներս վարչապետ Էրսոնդան ի ու արտգործնախարար Տաւուսօղլուի յայտարարութիւնները, թրքական իշխանութիւնները եւ կը փոքր ձեւ մի ջազգայնօրէն ստեղծել այն ս պատրուիկներ, որ արձանագրութիւններու վաւերացումը խոչընդոտող միակ խնդիրը Ղարաբաղն է եւ զիջումներ ընելու հայերու յամառութիւնը:

Հայ-թրքական «Ֆոթօլոյալիս ղիւանագիտութեան» ողջ ընթացքին, պաշտօնական Երեսանը կ'ակնարարէ, իսկ 2009-ի Հոկտեմբեր 10-ին Հիւրիիի ստորագրութեամբ, ըստ էութեան, վաւերացուց հայաստան-Թուրքիա այսօրուայ սահմանի եւ Կարսի 1921-ի պայմանագրի օրինականութիւնը, ինչպէս նաեւ՝ համաձայնեցաւ պատմաբաններու յանձնաժողով ձեւադրելուն: Հայաստանի Ֆոթօլոյի ազգային հաւաքականի մարզաշապիկին եւ Ֆոթօլոյի ֆետերացիայի գիտնականի վրայէ շնչուեցաւ Արարատը լեռը եւ ան փոխարինուեցաւ գնդակով: Կիւլի Երեսան այցի նախօրէին Հ-ը ցոյցարդեց ծաղկած խնձորին՝ զայն համարելով Կիւլի այցի աւետիս:

Չնայած հայկական կողմի ու ման քայլերուն, զիրիիեան արձանագրութիւններու ստորագրման արարողութենէ ետք, թուրքերը արդէն բաջապատօրէն կ'ըսէին որ չեն բաւարար սահմանը: Սակայն նախագահ Սերք Մարգեանը մեկնեցաւ Պոլսաւ, թէեւ նախապէս ինտաքցել էր, որ պատասխան ֆոթօլոյալին հանդիպանը ներկայ պիտի ըլլար, եթէ «սահմանը բաց լինի կամ լինենք դրա նախաշեմին»:

Սահմանը բացուեցաւ, օր-օրի այդ «նախաշեմը» սկսաւ աւելի հեռանալ, սակայն հայկական կողմը ոչ միայն ետ չէր կանգնէր երկու արձանագրութիւնները, այլ ի հաճութիւն արեւմտեան հանրութեան, որ կը ծափահարէր հայ-թրքական գործընթացը, կը հաստատիայ էր որ ան ունք անմիջապէս պիտի վաւերացնէին Ազգային ժողովին մէջ, եթէ առաջինը Թուրքիոյ խորհրդարանը զանոնք վաւերացնէր:

Հայ-թրքական «Ֆոթօլոյալիս ղիւանագիտութեան» ողջ ընթացքին, պաշտօնական Անգարան բոլոր հնարաւոր միջոցներով կը հասկցներ, որ վերջ տալու չէր Հայաստանի շրջափակմանը եւ Երեսանի հետ հաստատուելու չէր ղիւանագիտական յարաբերութիւններ, քանի ղեւ Լեւոնային Ղարաբաղի մէջ status quo-ի փոփոխութիւն տեղի չէր ունեցեր, այսինքն՝ հայերը ատրպէճանցիներու հող չէին զիջէր, գոնէ «Ֆիդօլիս եւ Ալտամը», ինչպէս վերջերս ըսեր է Թուրքիոյ արագործնախարար Տաւուսօղլուն:

«Ֆոթօլոյալիս ղիւանագիտութեան» քննադատները կը կանխատեսէին, որ ոչ միայն Թուրքիան վերջ տաւու չէր շրջափակմանը, այլ՝ հայ-թրքական իրականութեան մէջ գոյութիւն չունեցող յարաբերութիւնները աւելի լարուելու էին: Այսօր, փաստօրէն, կողմերու յայտարարութիւնները աւելի կոշտ են ու ոչ ղիւանագիտական, քան՝ էին մինչեւ 2008-ի ամառը: Սակայն եթէ Թուրքիոյ համար status quo-ի այս վիճակը, երբ Հայաստանը չի հրաժարիր արձանագրութիւններէն, նպաստաւոր է, ապա Երեսանը անոր ղիմաց ոչինչ կը ստանայ: Աւելին, քանի ղեւ Հայաստանը մէկ կողմէն կը շարունակէ յայտարարել, որ պատրաստ է անմիջապէս վաւերացնելու արձանագրութիւնները, եթէ առաջինը նոյնը ընէ Թուրքիոյ խորհրդարանը, միւս կողմէն՝ ստառծ կը պահէ մ այդ արձանագրութիւնները, դժուար թէ որեր է պետութիւն կամ կազմակերպութիւն սահմանը ապաշրջադրանքէ ու հարցով ճնշումներ բանեցնէ Թուրքիոյ վրայ կամ ճանջնայ Հայոց ցեղասպանութիւնը: Անշուշտ, եթէ արձանագրութիւններէն Հայաստանը հրաժարի, ապա հնարաւոր է, որ խոշոր երկիրները ոչ ճնշում բանեցնեն Անգարայի վրայ, ոչ ալ ճանջնան Հայոց ցեղասպանութիւնը: Բայց տարբերութիւն այն է, որ արձանագրութիւններու ստառծ ժամանակահատուածին մէջ՝ բոլորը իրենց գիդրոքրոքընումս արդարացնել ու են հայ-թրքական գործընթացը իբր չփճացնելու կերծ մտահոգութեամբ:


Յետեւաբար, որքան ալ հայկական կողմը կոշտ արտայայտուի Թուրքիոյ հասցէին կամ պատասխան տայ թրքական կողմէն ինչո՞ղ սպանակիչներուն, ատոնք ընկալուելու են որպէս լոկ քարոզչական քայլեր՝ ուղղուած այն լսարանին, որ հետեւողականօրէն քննադատներ Էր Հայաստանի գործող իշխանութիւններու թրքական քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ՝ սփիւռքին, որ, բացառութիւններէն մէկ կ'ըզմ, կը քննադատէր որ ու կը դատապարտէր նախագահ Մարգեանի «Ֆոթօլոյալիս ղիւանագիտութիւնը»:

Այսօր՝ Հայոց ցեղասպանութեան հերթական տարեկիցի նախօրէին, ճիշդ ժամանակն է, որ Հայաստանի Հ խանութիւնները եւ պաշտօնապէս իրաժար ի ն առնուազ եւ երկու նախադասման փայտանակող հայ-թրքական երկու արձանագրութիւններն եւ ի լուր հայ-թրքական գործընթացը պաշտպատէ մ ջազգային հանրութեան յայտարարեն, որ Հայաստան-Թուրքիա երկխոսութիւնը պարտաւոր են սկսիլ նոր, սպիտակ էջէ, առանց նախապայմաններու: Անշուշտ, չնայ երաշխիւ, որ Հայաստանի գործող կամ յաջորդ իշխանութիւնները հայ-թրքական որեւէ նոր արձանագրութիւն աւելի լաւ պիտի բանակցեն, բայց այդ անորոշ հեռանկարը արդարացում չէ այսօրուայ հայ-թրքական փաստաթղթային status quo-ն անվերջ հանդուրժելու համար:

(արեւմտահայերէնի վերածում)

#####

Ռուսական Թակարդ-Հայերը Կ'երթան Դէպի «Փայլուն Ապագայ»



Վերջերս երթուղային թաքսիի մէջ, երկու երիտասարդ տղաներու գրոյցը գրաւեց ուշադրութիւնս. - «Միա ջոկում ես՝ ջեզ գրոյից Ռուսաստանի քաղաքացիութիւն են տալիս, ի՞նչ են կորցրել էս անտէր երկրի», եւ արդէն փաստթղթերս եմ հաւաքում, արի միասին գնանք, պրծնենք Եստեղից...»

Խօսակցութիւնը գրաւեց ոչ միայն իմ, այլեւ երթուղայինի մէջ գտնուող 15 ուղեւորներու ուշադրութիւնը: Բոլորը միանգամայն սկսան երիտասարդի «հարցաքննել»՝ կ'անեն հասցէ...

Կարծես դրանի տի մասին ըլլար խօսքը, իսկ դա ընդամենը Հայաստանի մօտ Ռուսաստանի Դաշնութեան միկրացիոն ծառայութիւնն էր: Միանգամայն որոշեցի այցելել: Սպասարկումը բարձր մակարդակով էր. մարդոց նկատմամբ բարեհամբոր էւ յարգալից վերաբերմունք կայ:

Մասնուշեան 72 հասցէին գտնուող կեդրոնին մէջ, կը լսեն իւրաքանչիւր քաղաքացիին եւ կը վստահեցնեն, որ ընտրած ճանապարհը պիտի տանի զիրենց՝ «դէպի պայծառ ապագայ»:

Գիտելիքներս խորացնելու համար, մասնակցեցայ կեդրոնի կազմակերպած սեմինարին, որպէսզի աւելի մանրամասն ծանօթանամ ծրագրին: Միանգամայն պարզ դարձաւ, որ կեդրոնը գովազդի կարիք ալ չուի: Այդ մասին խոստովանեցաւ նաեւ սեմինարը վարող աշխատակիցը:

«Մենք գովազդ չենք անում, մեր մասին իմանում են բարեկամներից, ծանօթներից»,-ըսաւ ան՝ օրինակ բերելով նաեւ երթուղայինի դէպքը: Այնուամենայնիւ, հարցոցի՝ ինչո՞ւ գովազդ չեք կազմակերպում:

«Պատկերացնում էք, որ գովազդ կազմակերպենք, Հայաստանում մարդ չի մնայ», - պատասխանեց աշխատակիցը: Ան նաեւ նշեց, որ ամրոյի կու գան միմիայն իրենց կայքէջը:

«Մենք ոչ մէկին չենք պարտադրում, մեր ծրագրով Հայաստանից գնում են նրանք, ովքեր իրենց «փայլուն ապագայն» կապում են միմիայն Ռուսաստանի նման գերիգօր պետութեան հետ», - ըսաւ սեմինարավարը:

Ծրագրին կը մասնակցին Ռուսաստանի 30 սահմանամերձ մարզեր, եւ իւրաքանչիւր արեւելեան երկրում՝ քաղաքներ: Ծրագրի մասնակիցները իրաւունք կը ստանան ընտանիքով, իրենց ունեւորածքով, անգամ ինքնաշարժով տեղափոխուելու Ռուսաստանի Դաշնութեան այն քաղաքը, ուր ծրագրի պայմաններով պիտի կարողանան աշխատիլ:

Կը վճարուի մեկնողներու ճանապարհածախսը, կը տրուին կացարան, ցանկութեան պարագային մշտական քաղաքացիութիւն, աշխատանք, իրաւաբանական եւ առողջապահական ծառայութիւններէն օգտուելու հնարաւորութիւն եւ բաւականին մեծ գումար:

Կարելի է երեւէ՝ ա՛յնքալ է, որ Հայաստանի մարդուն իր ընտանիքը պահելու համար՝ Կը մտածեմ՝ արդե՞ս թելեմ: Եւ թելեմ ինչու, որ Հայաստանը նման ծրագիր իրականացնել, որպէսզի արտերկրի հայերը վերադառնան հայրենիք:

Պարզեցի, որ միկրացիոն ծառայութեան ամեն օր կը դիմեն 50-60 ՀՀ քաղաքացիներ է: Անոնցմէ իւրաքանչիւրը կու գայ միմիայն մէկ նպատակով՝ լինել երկիրը: Եթէ Ռուսաստանի համար այս ծրագիրը, ինչպէս իրենց կ'ըզմ է բաժնուող թերթիկներուն վրայ է նշուած, շատ կարեւոր մասնագիտութիւն ունի, եւ իրենց երկրի սահմանամերձ քաղաքներն ու գիւղերը կը բնակեցնեն ժաւագիտութիւն ունեցող հայերով, ապա բնական հարց կը ծագի՝ ՀՀ կառավարութեան համար, նման պետական մակարդակով իրականացուող ծրագրի նպատակը ո՞րն է:

Հայաստանը լծողները իրենց որոշումը կը բացատրեն շատ պարզ՝ գնում ենք յանուն մեր երեխաների ապագայի: Անոնք այս պահուն չեն մտածեր օտարութեան վտանգներուն մասին, զիրենց կը մտահոգէ միայն օրուայ հացի խնդիրը:

Արդէն կան ծրագրի առաջին արձագանքները՝ այն առումով, որ եթէ Ռուսաստանի Դաշնութիւն մեկնողներին նոյնիսկ ժամանակաւոր գրանցում կը տրամադրուի, մեկնելու է՝ մարդը կը ստիպեն հրաժարել Հայաստանի քաղաքացիութենէ: Իսկ ամրիկա թերեւս կը նշանակէ մէկ բան՝ մեկնումս անվերադարձ է:


Ռուսաստան մուտք գործելու պահեն, «ելուոր»ներու համար կեդրոնամեր է ըլլան եւ, բնականաբար, այնեւ այդ երկրներ այնպէս հեռանալ կ'են կրնար, քան ի դեռ չեն վերադարձուած ներդրուած գումարները: Իսկ որքան շատ է ընտանիքի անդամներու թիւը, այնքան մեծ է յատկացուելիք գումարի չափը եւ նոյնքան արժէ է երբեւէ հայրենիք վերադառնալու հեռանկարը:

Թեմիլնէ Եւրքեան (արեւմտահայերէնի վերածում)

ԴԵՏԵ

#####

Յեղասպանութեան կենդանի վկաներ



Ալիս Կասարեանը ծնած է 1909-ին, Արեւմտեան Հայաստանի մէջ: Այժմ ան կ'ապրի Արմախիրի մարզի Լորպատա գիւղի մէջ, իր դստեր տան մէջ: Երբ այցելեցիք զինք, Ալիս տատը բաւականին աշխոյժ էր, թէեւ արդէն մէկ տարիէ ի վեր չի կրնար առանձին քայլել:

Ան նոյնիսկ այդ տարիքին էր ս իրը մարտնչել: Ապա ցոյց տուաւ իր գործած ծանեկները, սեղանի ծածկոցները: Շատերուն է նուիրած իր ձեռագործները:

Ձեռագործութիւնը սովորէ է Յուստանի մէջ, ուր մօր եւ եթօր հետ յայտնուէր է Յեղասպանութենէ ետք: 101 տարեկան կինը արդէն շատ բան չի յիշէր, անգամ՝ իր ինքն ծնունդի տարիները: Իսկ որքան օգնութեամբ միայն կարողացաւ յիշել, որ հօրը՝ Յակոբ Պեպրեանին, դաժանորէն սպանել են, երբ ինքն կարճամեկը 6 ամսական է եղեր:

Ապաւելու են նաեւ վարապետ Խորեզօրը: Թուրքերը զայն մաշկազերծ ըրեր են: Մտաւ իր մօր, երգարու ու մի քանի արտիստներու հետ միասին տեղափոխուէր են Արմախիր: Յետի մօտ: Այդուրէ մահացել է մայրը: Ալիս տատը մօր մասին նոյնպէս ոչինչ կը յիշէ, տպաւորուէր է միայն անոր անունը՝ Չարդիկ:

«Որ գնացինք Յուստտան, ես 11 տարեկան էի, քեռիս մի սենեակ էր տուել, այնտեղ ապրում էինք: Ձեռագործութիւն էի անողում դպրցում: Գնում էի դասի ու տուն էի գալիս: ...Միկեզ զիջերուայ ժամը 12-ը՝ ձեռագործ էի անում, քեռիս բարկանում էր, որ աչքերս կը փչացնեմ, բայց էլի գործում էի»,-կը պատմէր Ալիս տատը:

Յետագային, ապրուրի միջոցը դարձեր է ձեռագործութիւնը: Տառը յիշեց իր առաջին ձեռագործ աշխատանքը: ...Ան Յուստտանի մէջ մահուանալէր է, երեխայ ունեցեր է, սակայն ամուսինը պատերազմի է գալցեր ու չէ վերադարձել:

Որպէս հայրենադարձ, ամուսնոյն ազգականներուն հետ 1947-ին եկեր է Հայաստան: ...Ալիս Կասարեանին մինչ օրս հանգիստ էր տալու այն միտքը, թէ ուր մնացած է այն ձեռագիրը, ուր գրառումներ կային իր գեղարտեսանի անդամներու կտորածին, հայկական շարքերի եւ իրենց պարանձմար տարիներու մասին:



Եպրաքսիա Ռեդրեանը 104 տարեկան է, բայց շատերը պիտի նախանձենին անոր՝ իր եռանդին համար: Իր արտաքինէն անորար էր գուշակել տարիքը, առաւել եւս, երբ կը վկայէր առանց դարարի, յատուկ արողաւորեանք արտասանել Յովիաննէն Թումանեանի «Մնուշք» եւ շատ մը այլ ստեղծագործութիւններ...:

Եպրաքսիա տատը ունեցել է 5 երեխայ՝ 4 աղջիկ, մէկ տղայ: Որդին արդէն մահացեր է, Եպրաքսիա տատը կ'ապրի Արմախիր քաղաքի մէջ՝ հարսի ու թոռնի մօտ: Մեր այցելութեան պահուն, ան նստած էր միջնաբերդ եւ չերմօքնէ կը գրուցէր իր տարեց կնոջ հետ:

Մեզ տեսնելով՝ ոտքի կանգնեցաւ, բարեւեց եւ քաղելով առաջ եկաւ: Մտածեցի, որ 104-ամեայ տառիկը դժուար թէ կարողանայ առանց օգնութեան քայլել, բայց սխալեցայ:

Տառը ըսաւ, որ յատուկ մեզի համար սպաս կ'եկէր, եթէ իմանար, որ իրեն այցելելու ենք: Սակայն, որ դէմէին ուրախութիւնը անմիջապէս անհետացաւ, երբ սկսաւ յիշել մանկութիւնը:

«Երբևէ ձեզ, երանի որ դուք չեք տեսել, թէ ինչպէս է թուրքը կտորելի հային: Սիւաուր էր, մայրն իր պարուր երեխուն գցում-փակնում էին, Թուրքերը խշտիկը մտցնում էին երեխու փորը ու օդի մըն քսելու փորձէին՝ Մենք էլ ձորներում թաքնուում էինք, որ մեզ չտեսնէին: Իմ աչքով մ տեսել, երկու թեւերն են արել: Մենք թաքնւում էինք՝ մինչեւ թուրքերը գնում էին, նորից արտաքայի էինք ընկնում: Եղանք հասանք Արազ, ջուրը լիւի արիւն էր, մեր տեղ գուպը ջուր խնայեց: ...Ձեռնարկ իմ աչքերը, շունձարի, թէ ինչեր էին անում: Ելի եմ անում՝ հազար երանի ձեզ, որ դուք չեք տեսել», - կը պատմէր Եպրաքսիա Ռեդրեանը:

Կը 9 տարեկան էր, երբ գաղթէր են հայրենի Կարս գաւառի Մառուակ գիւղէ: Եպրաքսիա տատը մինչ օրս չի հաշտուիր այն մտքին հետ, որ Կարսը արդէն հայերուը չէ:

Եւ գրոյցի ընթացքին մի քանի անգամ նշեց որ Կարսը թուրքերուն չէ եւ այնտեղ ապրեր են բացառապէս հայեր:

Եպրաքսիա տատը կը պատմէր, որ երբ թուրքերը սկսեր են հայերուն կտորելը, իրենց տան բակին մէջ մի քանի մեծ իր փորել են, ամբողջ ունեցուածքը (եցուցեր են հորերուն մէջ՝ յոյս ունենալով, որ ետ պիտի գան եւ տեղ կանգնին իրենց ունեցուածքին:

Եպրաքսիա տատը յայտնուէր է Կիւմրիի մանկատան մէջ: Ան այնպէս կը իրաւագորէր Կարսի իրենց տունը, կարծես նոր էր այնտեղէն վերադարձել:

Եպրաքսիա տառիկն հետաքրքրուեցաւ՝ եթէ պահպանուած ըլլայ կարգից տունը, արդե՞ս պիտի ցանկաւ իրեն այնտեղ ապրի: «Վայ, վայ, չէ: Հաց կը հաւաքեմ, մուրցեղանութիւն կ'անեմ, բայց Թուրքիա չեմ գնա: Ի՛նչ խեց եմ անում, որ Թուրքիայի մտքից իմ բացում ե տեսել, որ ինչու հետ ճամբայ երթաւ: Ասում եմ՝ Խնէ հետ ընկերուկին արա, փետը ձեռքից մի գցի, դրանք անդադուեց շուն են: Թուրքերը չեն փոխուել, դրանց կաթի մէջ արդէն կայ: Հիմա ի՛նչ պիտի փոխուի իրանց մօտ: Ժողովրդի կտորածն դիպկները հաւաքում պատի պէս շարում էին ու գունան էին խփում», -կը պատասխանէ Եպրաքսիա տատը:

Թուրքերը կանգնել են ազգականները, մօրենական կողմէն կենդանի մնացել է միայն մօրեղբայրը: Կիւլ տատը երջօր, քեռիին ու ծնողներուն հետ փախել է Սուրիա՝ 1920-ական թուականներին:

«Միդիալում հայերն ուրախացան այն ժամանակ, երբ ֆրանսացիները եկան: Ով հազուատ, ուտելիք չուէր, բոլորին բաժանւում էին: 5 տարի ֆրանսացիները մեզ պահել են: Մենք իրանց հետ ուզում էինք գնալ Զոնալիս, բայց նրանք չթողեցին, ասեցին՝ պիտի վերադառնաք Հայաստան: 1947-ին Միդիայից գնացել ենք Պէլուրի, այնտեղից էլ Լաւուլ՝ Պաթումի ու Հայաստան:

ԴԵՏԵ (ապաւում մեկերով)

#####

Հայաստան բերուելէն 42 տարի ետք ալ՝ Պետրոս Դուրեանի Գանկը Կը Մնայ Անթաղ



Թիւ 1 Մարիլ-Մայիս 2011 / www.azadkhosk.com / Ելեկտրոնային Անկախ Պարբերաթերթ

[Գլխավոր էջ](#) | [Համայնքային](#) | [Խմբագրական](#) | [Հարցազրույց](#) | [Յօդուածներ](#) | [Գրական-Մշակութային](#) | [Տեսակէտ](#) | [Անցուղարձ](#)

If you can not read this page then click here to view the pdf version

Նիւթեր

* [Ընտրելու եւ Ընտրուելու Իրաւունքը եւ Մենք](#)

* [Մարդու Իրաւունքների, Պետքարտուղարութեան Չեկոյցի եւ մեր Ապագայի մասին](#)

Ընտրելու եւ Ընտրուելու Իրաւունքը եւ Մենք



Ընտրելու եւ ընտրուելու իրաւունքը հիմնական առանցքն է ժողովրդավարական կարգերու։ Ընտրողը՝ իր քուէով, կ'ընտրէ այն անձնաւորութիւնը, որ լաւագոյնս կը միտի իրականացնել ընտրողին փափայած քաղաքական, տնտեսական, ընկերային, կրթա-մշակութային եւ այլ հայեացքներն ու նպատակները...։ Իսկ ընտրուողն ալ, փոխադարձաբար, հաշուետու կ'ըլլայ զինք ընտրող զանգուածին առջեւ՝ իր յետագայ վարքագիծին, որոշումներուն, արարքներուն ու ընդհանուր գործունէութեան համար, որոնք որոշապէս պէտք է ըլլան համապատասխան իր նախընտրական խոստումներուն։ Չետեաբար, կարծէք լռելեայն համաձայնութիւն մը կը կնքուի ընտրողին եւ ընտրուողին միջեւ, տեսակ մը անգիր պայմանաւորաւածութիւն։ Այո՛, քանզի՝ բուն իշխանութիւնը կը պատկանի ընտրազանգուածին կամ ժողովուրդին, եւ կը փոխանցուի ընտրուողին միայն մէկ պայմանով․․․ ընտրուողը պարտի լաւագոյնս ներկայացնել՝ բանիւ եւ գործքով, զինք ընտրողներուն ազգային-քաղաքական, ընկերային, գաղափարական,... համոզումներն ու տեսականը ու՝ ճիշդ պատասխաններ գտնել զանոնք յուզող հրատապ հարցերուն։ Դեմոկրատական կառավարման բանալի հասկացութիւն է սա։

Ինչ կը վերաբերի հայ իրականութեան, վաղուց անցած է քաղաքական գերութեան ժամանակաշրջանը։ Վաղուց անցած է հաւաքական կեանքի այն կարգն ու սարքը որ ամկայ էր, օրինակ, Կոստանդնուպոլսոյ մէջ, քաներորդ դարու սկիզբը դեռ՝ երբ հայ հանրային կեանքը կը գտնուէր իշխանութեանը տակ քապաքաղաքականացած ամիրաներու, էֆենտիներու եւ անոնց նմաններուն..., եւ երբ հայութիւնը կը տուայտըր, մեծաւ մասամբ, իմացական խաւարի, գերութեան թմբիրի, արտաքին եւ ներքին բռնութեանց ներքոյ...։

Մեր օրերուն, ընտրելու եւ ընտրուելու իրաւունքը կ'ենթադրէ, եապէս, որ բոլորն ալ հաւասարապէս պարտին մասնակցել ընկերութեան ձեւաւորման գործընթացին։ Չուզահեռաբար, բոլորն ալ պարտին ունենալ քաղաքացիական գիտակցութիւն՝ մշտապէս որոնելու, մտածելու, կշռադատելու, թէ ո՞րն է աւելի բարենպաստը կամ արդիւնաւորը տուեալ հասարակութեան համար, եւ ըստ այնմ ընտրելու իշխանութեան յաւակնող անձը կամ անձինք։ Չետեաբար, ընտրուիլ յաւակնող թեկնածուներ կը մրցակցին՝ իրենց նախընտրական խոստումներով, գաղափարներով եւ ծրագիրներով, տենդագին կը փորձեն ամենէն վստահելին ու յուսակն ներկայանալ իրենց ընտրազանգուածին առջեւ։ Տարակոյսէ վեր է, որ մրցակցութիւնը՝ գաղափարներու եւ ծրագիրներու միջեւ, կոչուած է ըլլալու ամենէն առողջ ու քաղաքակիրթ պայքարը դեմոկրատական ընկերութեանց մէջ։

Դժբախտաբար, ակնյայտ երեւոյթ է, որ մեր գաղութահայ կեանքին մէջ (եւ ոչ միայն), գաղափարներու առողջ եւ արդիւնաւէտ բանավեճի կայացման փոխան՝ խաւարամիտ միջոցներ ի գործ կը դրուին յաճախ, շահելու համար ընտրողին քուէն...։ Գրեթէ համատարած երեւոյթ դարձած են, ինչպէս կը տեսնենք այս օրերուն՝ հակառակորդ թեկնածուն սեցնելը, զայն խժթելն ու զրպարտելը...։ Երբեմն, փորձեր ալ կ'ըլլան տարբեր հնարքներով կաշառելու ընտրազանգուածը, ուղղակի թէ անուղղակի...։ Միաժամանակ, կիրքերը կը թեժանան, ամբոխավարական տրամադրութիւններ եւ կոյր աստելութիւններ կը իրահրուին, մէկ թեկնածուն պաշտպանող կողմը թշնամաբար կը տրամադրուի միւսը պաշտպանող կողմին, վիրաւորական ու նախատական խօսքեր ալ կը հնչեն մէկը միւսին հասցէին, եւ կարծեք համայնքը ամբողջովին կը բեւեռանայ...։

Ամբոխավարական տրամադրութեանց այս թոփուրեհին մէջ, մարդկային առողջ բանականութիւնը եւ ողջմիտ դատողութիւնը կարծեք ամբողջովին կը դադրին գործել։ Մասնաւորելով մեր խօսքը Կիպրահայ Պետական Ներկայացուցիչի ընտրութիւններուն, որ պիտի կայանան Մայիս 22-ին, նշենք որ, ո՛վ հեգնանք, ի յայտ եկող թեկնածուներէն մին՝ ամենախիստ խօսքերով կը պախարակուէր դեռ քանի մը տարիներ առաջ՝ Նոյնիկըն զայն այժմու ամենաշերմ պաշտպանողներուն կողմէ, որպէս հակառակորդ ճակատի թեկնածու, որ ի դէպ տասնամեակներ շարունակ ամենագործոն դերակատարներէն մէկն էր եղած Նոյնիկըն ճակատի կուսակցական, ազգային կեանքին մէջ եւ ամենաթունոյ ըննադատը հակառակորդ ճակատին, որ այժմ կ'որդեգրէր զայն...։ Ի՞նչ անուս տալ այս ընդհանուր երեւոյթին։ Յիշողութեան կոյր ո՛ւստ, քաղաքական պատեհապաշտութիւն, թէ՛՝ քիւսիսնդրութեան մոլուցք, որ ուղղուած է ամեն գնով հարուածելու գործող Պետական Ներկայացուցիչի վարկը...։ Եւ՛ վա՛յ անոր, որ կը փորձէ անկախ մտածել, ինքնուրոյն կշռադատել հակընդդմ թեկնածուներու վստահելութիւնը, անոնց անցած ուղին, ցուցաբերած հանրային վարքագիծը, անհատականութիւնն ու բարոյական նկարագիրը եւ մանաւանդ՝ կը յանդգնի տարբեր կեցուածք որդեգրել՝ իր «կողմ»ի մեծամասնութեան կեցուածքէն։ Նման մարդկային հիմնարար իրաւունք տրու՛ած է անհատին, մեր իրականութեան մէջ, առ հասարակ։ Չաւարը կը փրթի, փոթորիկ կը պայթի եւ ենթական կը մատուցի բարոյական ահաբեկումի, քանզի «դաւաճանած» է իր «կողմ»ին, «խմբակցութեան» լը, թէ «քլիք»ի մը կոյր ու մոլեգին վրեժխնդրութեան...։ Վրեժխնդրութիւն մը՝ այս, որ քաղաքական մաքրու պայքար է ու թմբկահարուած գաղափարներէն ու ծրագիրներէն վեր, անձնական թշնամանքի եւ քիւսիսնդրութեան դրսեւորում կը թուի ըլլալ գերազանցօրէն։

Եւ՛ հարցումը։ Ու՛ր են, արդեօք, այս Նոյն խմբաւորումները՝ սովորական, այսինքն ոչ-ընտրական ժամանակներուն...։ Մրափի մէջ, թէ՛՝ ձմեռնաքունի, որմէ կ'արթնան կարծեք միայն նախընտրական պայքարի շրջանին, եւ ուր կը վերադառնան դարձեալ՝ ընտրութիւններէն անմիջապէս ետք, սպասելով յաջորդ ընտրապայքարին։ Արդե՛ք աթոռակաշիւը ըլլալու է, վերջապէս, ազգային տենդահար գործունէութեան մը մեկնակետն ու նպատակը։ Մեր համայնքային, հաւաքական կեանքի բուն առանցքը...։Պիտի կարենա՞նք, ի վերջոյ, իսկապէս միացեալ ուժերով եւ չարաչար իռլովուած, շահարկուած, սակայն այդպէս ալ երբեք չիրագործուած, իրա՛ւ համերաշխութեամբ՝ քով-քովի զալ եւ գաղութային ռազմավարութիւնն մը մշակել յանուն մեր ազգային-հաւաքական շահերուն եւ իրաւունքներուն, փոխանակ յու՛մ պէտս մսխել ու մեր ուժերը աթոռապաշտութեան եւ դիրքապաշտութեան համար...։

Եւ՛ հուսկ։ Ո՛ր է ժողովրդավարական վարքագիծը, քաղաքակիրթ իրարհանդուրժողութիւնը, տարբեր տեսակետներու նկատմամբ յարգանքը։ Ա՛յ ժամանակը չէ՞, որ զգաստ ու զգօն միտքով ու կեցուածքով, փոխադարձ յարգանքով եւ մեր խիղճին ու դատողութեան թելադրանքով ընտրենք մեր նախասիրած թեկնածուն, հեռու մնալով՝ մէկը միւսը վարկաբեկելու եւ նուաստացնելու ծառայող բանբասանքներ եւ չարախօսութիւններէ, անվայել ու վնասաբեր խօսքերէ ու արարքներէ...։ Յեխարձակումներէ։ Երեւոյթներ՝ որոնք միայն մուր կը քսեն համայնքի վարկին, կը նսեմացնեն անոր մակարդակը եւ դուռ կը բանան Նորանոր պառակտումներու...։

Ազգային-հաւաքական կեանքի այս ճգնաժամային ժամանակներուն ի մասնաւորի, օրուան հրատապ հրամայականը ըլլալու են, անտարակոյս, սթափ միտքն ու կշռադատ բանականութիւնը, դեմոկրատական վարքն ու բարքը եւ յատկապէս փոխգործակցութեան անկեղծ ոգին, յանուն աւելի արժանավայել ու յառաջդէմ ապագայի մը՝ մեր եւ զաւիք սերունդներուն համար։

Երան Գույումճեան

#####

Մարդու Իրաւունքների, Պետքարտուղարութեան Չեկոյցի եւ մեր Ապագայի մասին



Օրերս հրապարակուեց ԱՄՆ պետախարարութեան Յայաստանի մասով Մարդու իրաւունքների գեկոյցը՝ 63 էջ։ Ի դեպ, Թուրքիայի մասը ընդամենը 46 էջ է, որը նշանակում է, որ աւելի քիչ բան կայ գրելու։ Սա այն դեպքն է, որ ինչքան քիչ գրեն, այնքան լաւ։ Ընդհանուր ակնարկը ցոյց է տալիս, որ ամերիկացիների գրածը ճիշդ է։ Գուցէ ուրիշներն այլ շեշտադրումներ անելին, քան ամերիկացիները, այսուհանդերձ գեկոյցի փաստական մասը եւ գնահատականները ճիշդ են։

Յիմա ոմանք դեմքերին Նորից գարմանքի արտայայտութիւն են տուել։ Ինչո՛ւ։ Ի՞նչ է մենք չգիտէինք թէ ինչ է կատարում մեր իրաւապահ համակարգում, բանկում, խօսքի ազատութեան ոլորտում կամ գործարարութեան ոլորտում։ Մենք ամերիկացիներից աւելի լաւ գիտէինք եւ գիտենք, պարզապէս նրանց խօսքն աւելի ծանրակշիռ է եւ բնականաբար ազդեցութիւնն՝ աւելի զօրեղ։ Սա իրողութիւն է, որը ժամանակակից աշխարհում որեւէ իշխանութիւն չի կարող անտեսել։

Յիմա ուզում են անդադառնալ որոշ յարակից հարցերի, որոնք էական են հենց գեկոյցի ընկալման համար։ Ձայներ են հնչում, որ որեւէ պետութիւն իրաւունք չունի միջամտելու այլ պետութեան ներքին գործերին։ Յամաձայն էմ, սակայն մարդու իրաւունքները վաղուց արդէն պետութիւնների ներքին գործը չեն։ Ներկայումս եւ իշխանութիւնների նկատմամբ անվստահութիւնը, մարդիկ խորքաւուն են բնոյթ։ Պատահական չէ, որ այդ իրաւունքները կոչւում են մարդու համընդհանուր իրաւունքներ (Universal Human Rights)։

Բացի դրանից՝ գրեթէ բոլոր երկրները, այդ թւում Նաեւ Յայաստանը, ստորագրել են մարդու իրաւունքների վերաբերող բազմաթիւ միջազգայնագրեր, ըստ այդմ իրենց պարտաւորութիւններին տուել են իրաւական ձեւակերպումներ եւ ստանձնել են անսակարկ յանձնառութիւններ։ Եթէ երկրներ էլ կան, որ չեն ստորագրել նման փաստաթղթեր, միեւնոյն է, բոլորն են պարտաւոր դրանք յարգել, քանի որ մարդու իրաւունքները յարգելու Նորմն միջազգային իրաւունքի հիմնարար սկզբունք է։

Միւս առարկութեան ձեւն էլ այն է, որ սկսում են մեր երկիրը համեմատել հարեւանների հետ կամ ընդհանրապէս համեմատութիւններ անել տարբեր երկրների միջեւ։ Նախ, մարդու իրաւունքները յարաբերական չեն, այլ բացարձակ արժեք են։ Յետոյ, եթէ ոմանք թւում է, որ մեզ խիստ են մօտենում, եւ եթէ դա ճիշդ է, ուրեմն պետք է բողոքել ոչ թէ խստութեան դեմ, այլ պահանջել, որ Նոյն խստութիւնը պահպանուի այլ երկրների նկատմամբ եւս։

Յիմա՝ ամենակարեւորի մասին։ Տաւօք սրտի, մեզանում չկայ այն ընկալումը, որ մարդու իրաւունքների հարցը Յայաստանի համար, գուցէ եւ ի տարբերութիւն շատ այլ երկրների, կենսական կարեւորութեան հարց է։ Պարզապէս միտքէ։ Օրինակ, վստահաբար Սոմալիում կամ Չադում մարդու իրաւունքների վիճակն աւելի վատ է։ Սակայն մեր եւ Նրանց միջեւ կայ հսկայական տարբերութիւն, քանզի մեր առջեւ ծառացած խնդիրներն են ուրիշ։

Նշամ երկրները կարող են մի յիսուն տարի են այս վիճակում գոյատեւել այն յոյսով, որ ի վերջոյ յետոյ լաւ կը լինի։ Մենք այլ յիսուն տարի չունենք։ Մենք երեսուն տարի էլ չունենք։ Մեր երկրին արագօրէն մարդաթափ է լինում, կայ բնակչութեան ծերացում, սաստկանում է բնակչութեան եւ կապիտալի արտահոսքը երկրից, ծայրահեղ օրէն մաշուած են ենթակառուցածքային բոլոր համակարգերը, խորհում է իշխանութիւնների նկատմամբ անվստահութիւնը, մարդիկ խորքաւուն են սեփական երկրից եւ այլն, եւ այլն։ Քսան տարուայ ընթացքում մենք արդէն սպառել ենք մեր ժառանգութիւնը։

Գտնուելով նման աշխարհադաշնական վիճակում, ինչի մէջ ենք մենք, եւ լինելով փաստացի պատերազմի վիճակում՝ այս ամէնը կարող է ճակատագրական լինել ոչ միայն մեր պետութեան ապագայի, այլեւ հայ ժողովրդի հաւաքական գոյութեան համար։

Կան բազմաթիւ բռնապետական երկրներ, որոնք, Նաւթ ու գազ ծախելով, կարող են երկիր պահել։ Մենք դրա հնարաւորութիւնը չունենք։ Մեր միակ ուղին օրէնքի ազդեցութեան միջոցով, անխախտ ժողովրդավարութեան միջոցով մարդկանց եւ կապիտալի ներհոսքի գալստովումն է երկրի, արդիական ստեղծագործ գործարարութեան բացայայտման համար պայմանների ստեղծումը։ Այդ դէպքում գուցէ եւ կը կարողանանք դիմակայել ահազանցող վտանգներին։

Սակայն քանի դեռ մեր իշխանութիւնները են ընդհանրապէս հասարակութիւնը մարդու իրաւունքների պահպանումը չեն քննել կալել որ պէտս կենսապահովման միջոցն են երկրի կառավարման ամենաարդիւնաւէտ ձեւ, այլ արեւմտեան թիթիգութիւն կամ մեր դէմ մուր ուժերի պարզած դազանակ, մենք չենք կարողանալ ապահովել առաջընթաց։

Ինչ մեղքս թանցնել։ Ես ինքն որոշութեամբ չեմ եկել այն եզրայանգմանը։ Առաջ մտածում էի, որ հասարակութեան գերագոյնս հրշակուի փուլում, յանուն անդհարտ շահի, կարելի է սահմանափակել մէկ անհատի իրաւունքները։ Սակայն փորձը ցոյց տուեց, որ այդպէս չի լինում։ Քսանի որ հասարակութիւնը բաւականա՞ծ է անհատներին, ուստի մէկ մարդու իրաւունքների ոտնահարումը ի վերջոյ բերում է ոռջ բնաջանութեան իրաւունքների ոտնահարման։

Մարդու իրաւունքների անշեղ իրականացումն է մեր ազգային եւ հասարակական բոլոր իղծերի, մեր դարաւոր երազանքների կենսագործման անսասան հիմքը։ Մենք պարզապէս այլընտրանք չունենք, քանզի առանց մարդու իրաւունքների պահպանման՝ մենք պարզապէս ապագայ չունենք։

Արա Պապեան

Մտտուս վիճեալի կեդրոնի ղեկավար

